ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 88

ք. Երևան 26 .10.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մոդուլային շարժական շենքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ՓՆՄԱՊՁԲ-23-10/3» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից):

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և Ընթացակարգի շրջանակներում ճանաչվել է ընտրված մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենքով սահմանված ժամկետում՝ վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

11.09.2023թ. կայացած նիստում հանձնաժողովն արձանագրել է, որ «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում պատվիրատուին չի ներկայացվել իր կողմից հաստատված /կնքված/ պայմանագիրը և այդ պայմանագրի որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և ընթացակարգի հրավերի 9.4 կետերի պահանջները՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հաշվի առնելով, որ «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝ «Օ ՓԻԵՌ ԳՐՈՒՊ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ